ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 4644

« 19 » հունիսի 2023թ.

ԱԼՖԱ-ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար հեռախոսային սարքերի և հատուկ փաստաթղթեր կարդացող սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/23» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը՝

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարություն (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3) հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է լիազորագիր, սակայն լիազորագրով Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի տնօրենը 14.04.2023թ.-ին լիազորել է հիշյալ անձին էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելու Դատական դեպարտամենտի կարիքների համար «Համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված N ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի բոլոր փաստաթղթերը, այն դեպքում, երբ քննարկվող գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/23»**, որը հայտարարվել է **05.06.2023թ.-ին**՝ Դատական դեպարտամենտի կարիքների համար **հեռախոսային սարքերի և հատուկ փաստաթղթեր կարդացող սարքերի** ձեռքբերման նպատակով:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/23» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հունիսի 20-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

Կատ՝. Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788